

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով  
15-18 սեպտեմբերի 2016թ.  
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):  
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция  
15-18 сентября 2016г.  
Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ  
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ  
2016

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց  
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Маштоу э.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400  
L 657

### **Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### **Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

**ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄՅՈՒՄ  
ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ  
ԲԱՐՔԱԿԱՆ ԲԱՐԱԴՐԻՉՆԵՐԸ ԶԱՌՈՐԴ ԴԱՐ ԱՆՑ**

**Մարգարիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարան,  
ՌՕԼՄՀ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների,  
ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոն,  
Ասպիրանտուրա (ԻԳ 00-02, «Քաղաքական ինստիտուտներ և  
գործընթացներ»), դասախոս  
[petrossianmaga@gmail.com](mailto:petrossianmaga@gmail.com)  
Գիտական ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆեսոր Տիգրան Թորոսյան*

Սառը պատերազմի ավարտը կարևոր իրադարձություն էր, առաջին գլոբալ շրջադարձը ժամանակակից միջազգային հարաբերություններում: 1990-ականների սկզբին՝ նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում, երբ գլոբալ հակասությունները վերացան, բազմաթիվ հակամարտություններ կրկին ակտիվացան: Դրանց մեծ մասի ակտիվացումը կապված էր հորհրդային Միության, ինչպես նաև Հարավսլավիայի փլուզման հետ<sup>1</sup>: Արդեն 1990-ականների կեսերին ակտիվ ռազմական գործողություններով ուղեկցվող հակամարտությունների ընդհանուր թվի նվազման միտում նկատվեց: Այսպես օրինակ, 1989թ. կային 36 խոշոր ռազմական հակամարտություններ աշխարհի 32 շրջաններում, 1994-ին 32 հակամարտություններ՝ 28 տարածաշրջաններում, իսկ 1995 թ.՝ համապատասխանաբար 30 և 25<sup>2</sup>:

Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների կարգավորումն ու խնդրի վերջնական հանգուցալուծումը շարունակում է մնալ չափազանց բարդ գործընթաց, չնայած հակամարտությունների միջնորդների լավատեսական մոտեցումներին և միջազգային հանրության կողմից ուշադրության կենտրոնում լինելու փաստին: Այս խնդրիների լրջությունը մեծամասամբ պայմանավորված է ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրավիճակով, որով մեկնարկեց ազդեցության գոտիների վերաբաշխման մի նոր գործընթաց: ԽՍՀՄ փլուզումից հետո այս տարածաշրջանում հակամարտությունների կարգավորումը մեծապես կախված է աշխարհաքաղաքական

<sup>1</sup> Zartman W. Toward the Resolution of International Conflicts, *Peacemaking in International Conflicts: Methods and Techniques*. Ed. By I.W. Zartman and J. L. Rasmussen, Washington, 1997, pp. 3-22.

<sup>2</sup> Лебедева М. Межэтнические конфликты на рубеже веков (методологический аспект), *Мировая экономика и международные отношения*, 2000, N 5, сс. 31-39.

մրցակցությունից, քանզի այն գտնվում է մի շարք ազդեցիկ պետությունների աշխարհաքաղաքական շահերի հատման կետում: Հարավային Կովկասում իրավիճակի կտրուկ փոփոխությունը՝ պայմանավորված 2008թ. հնգօրյա պատերազմով, հանգեցրեց բոլորովին նոր իրավիճակի, իսկ Լեռնային Ղարաբաղի դեպքում նոր և արյունալի բախումներ արձանագրվեցին 2016թ. ապրիլին: Հետաքրքրությունը Հարավային Կովկասի նկատմամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ այն հանդիսանում է Եվրասիական Բալկանների մի մասը, որի մեջ են մտնում ինչպես Հարավային Կովկասը, այնպես էլ Ղազախստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Տաջիկստանը<sup>1</sup>:

Հակամարտությունների կարգավորման գործընթացների արդյունավետությունն ապահովելու տեսակետից կարևոր է տարբերակումն ըստ իրավական և քաղաքական բաղադրիչների<sup>2</sup>: Ինքնորոշման և ոչ ինքնորոշման հակամարտությունների իրավական բաղադրիչները սկզբունքորեն տարբերվում են միմյանցից: Պատճառն այն է, որ այդ դեպքերի կարգավորման քաղաքական բաղադրիչի տեսակետից ինդիքն ավելի պարզ է, քանի որ իրավական բաղադրիչն այս դեպքում պետության սահմանների փոփոխությունն է, նոր պետական միավորում չի ձևավորվում, այլ միայն պահանջվում է հաշտության եզրեր գտնել հակամարտող կողմերի միջև<sup>3</sup>: Ինչ վերաբերում է ինքնորոշման հակամարտություններին, ապա այդ դեպքում ևս իրավական հիմքը հստակ ու սպառնիչ է: Ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ հիմնարար փաստաթղթերը<sup>4</sup> սահմանում են, որ այն միջազգային իրավունքի բարձրագույն նորմ է և չի կարող ենթարկվել որևէ սահմանափակման:

Այսպիսով, իրավիճակն ամբողջ խորությամբ և համակողմանի պատկերացնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել Հարավային Կովկասի երեք հակամարտությունների կարգավորման իրավական հիմքերը, քանզի հնարավոր ցանկացած լուծում՝ մասնավորապես կարգավիճակի սահմանում, պետք է վերջիվերջո ստանա իրավական հիմնա-

---

<sup>1</sup> Brzezinski Z. The Grand Chessboard: America Primacy and its Geostrategic Imperatives. Perseus Books Group, 1997, Chapter 5.

<sup>2</sup> Torosyan T., To the Resolution of Intractable Conflicts: Nagorno-Karabakh and Kosovo, *Iran and the Caucasus*, 2013, № 17, pp. 427-441.

<sup>3</sup> Թորոսյան Տ., Պետրոսյան Ս., Հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, Հայկական քաղաքագիտական հանդես, 1 (2), 2015, էջ 135-139:

<sup>4</sup> Declaration on Principles of International Law Friendly Relations And Cooperation among States In accordance With The Charter Of The United Nations, [http://www.unhcr.org/refworld/topic/459d17822\\_459d17a82\\_3dda1f104\\_0.html](http://www.unhcr.org/refworld/topic/459d17822_459d17a82_3dda1f104_0.html), (07.07.2016); Charter of the United Nations, <http://www.un.org/en/documents/charter/>, (07.07.2016), International Covenant on Civil and Political Rights, [treaties.un.org/doc/Publication/UNTS/Volume%20999/volume-999-I-14668-English](http://www.un.org/doc/Publication/UNTS/Volume%20999/volume-999-I-14668-English), (07.07.2016), Helsinki Final Act, <http://www.osce.org/mc/39501>, (07.07.2016)

վորում<sup>1</sup>: Եթե իրավական հիմքերի տեսակետից Լեռնային Ղարաբաղի դեպքն անթերի է, ապա Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքերի համապատասխանության հիմնավորումը լուրջ դժվարությունների հետ է կապված, մասնավորապես՝ ինքնորոշման հանրաքվեի անջուլթամբ: Իհարկե, բոլորն էլ բռնակցվել են միութենական հանրապետության կամայականորեն և ստիպողաբար՝ առանց հաշվի առնելու բնակչության կամարտահայտության իրավունքը: ԽՍՀՄ տարիներին ստիպողաբար մեծապես փոխվել է այդ ինքնավար միավորների ժողովրդագրական կազմերը: Տարբերություններ առկա են նաև միջազգային կազմակերպությունների ընդունած փաստաթղթերի տեսակետից: Եթե ՄԱԿ-ի և ԵԽՏԿ-ի ընդունած բանաձևերում չկա հստակ ձևակերպում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի անջուլթամբ հակամարտության կարգավորումից հետո չի, ապա Հարավային Օսիայի և Աբխազիայի դեպքում անկախությունը բացառվում է, և այն դիտարկվում է որպես Վրաստանի տարածքային ամբողջականության իրավունքի ոտնահարում:

Երեք հակամարտությունների դեպքում էլ պատերազմական գործողություններ տեղի են ունեցել ագրեսիայի հետևանքով: Հատուկ կարգավիճակ ունեցել է միայն Լեռնային Ղարաբաղը՝ 1989թ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում: Բողոքի դրսևորումներ խաղաղ ցույցերի տեսքով եղել են մինչ երեք հակամարտությունների խորացումն ու ռազմական բախումների վերածվելը: Դրանք իրականացրել են ինքնորոշվել ցանակցող ժողովուրդները, սակայն ի պատասխան մետրոպոլիսները դիմել են ճնշումների ու բռնությունների: Հատուկ ուսումնասիրության կարիք ունեն վերջին՝ աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը իրավական գործոնի վրա: Հարավային Կովկասի համակարտության համեմատաբար ակտիվ փուլերն ընթացել են գրեթե զուգահեռաբար: Ճիշտ է սակայն, որ 2008թ. Հարավային Օսիայում և Աբխազիայում արձանագրվեցին նոր բախումներ՝ Վրաստանի նոր իշխանությունների որդեգրած «հողահավաք» քաղաքականության հետևանքով ծագած ռուս-վրացական պատերազմի արդյունքում:

Կարգավորման գործընթացի քաղաքական բաղադրիչի գշխավոր տարրը բանակցություններն են, որտեղ շատ մեծ է միջնորդների դերակատարությունը<sup>2</sup>: Ընդ որում, ինչքան բարդ է իրավիճակն, այնքան ավելի կարևոր է միջնորդների՝ իրավիճակը կառավարելու կարողությունը<sup>3</sup>: Միջազգային կառույցների ձգտումը՝ բանակցությունների միջոցով կարգավորման հասնելու ուղղությամբ, միանգամայն համապատասխանում է նրանց առաքելությանը: Սակայն ինքնորոշման հակամարտու-

<sup>1</sup> Թորոսյան Ս. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, Տիգրան Մեծ, 2008թ., էջ 16:

<sup>2</sup> Torosyan T., Vardanyan A., The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, Geopolitics, 2015, № 20, 3, pp. 559-582.

<sup>3</sup> Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, 2012թ., էջ 45:

թյունների դեպքում, երբ կարգավորման հավանական ելքը ինքնորոշվող կողմի անջատումն ու անկախ պետության ձևավորումն է, խնդիրն ավելի է բարդանում: Փոխզիջումային լուծման հասնելու հնարավորությունների սպառման և զինված բախումների վերսկսման վտանգի մեծացման դեպքում հակամարտությունների կանխարգելման կամ կարգավորման գործընթացներում ուղղակի կամ անուղղակի ձևով լիազորված և ներգրավված միջազգային կազմակերպություններն ունեն բոլոր անհրաժեշտ լծակներն իրավական կարգավորում և վերջնական լուծում ապահովելու համար: Այդ առումով միջազգային իրավունքի նորմերը լիարժեք և սպառնիչ են, բայց դրանք երբեմն անտեսվում են հենց միջնորդների կողմից, որոնք հաճախ ներկայացնում են ազդեցիկ պետություններ և այս կամ այն ձևով ոչ բացահայտ առաջ են մղում այնպիսի լուծումներ, որոնք պայմանավորված են իրենց երկրների աշխարհաքաղաքական շահերով: Աշխարհաքաղաքական մրցակցությունը հաճախ դառնում է հակամարտությունների խաղաղ կարգավորման հիմնական խաչընդոտներից մեկը, և ազդեցիկ տերությունների շահերի բախումը կամ դրա բացակայությունը տվյալ տարածաշրջանում կարող է որոշիչ ազդեցություն ունենալ հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա<sup>1</sup>: Դրանով է պայմանավորված ոչ միայն վերջնական կարգավորման բացակայությունը Հարավային Կովկասի հակամարտությունների համար, այլև այդ գործընթացի տարամիտումները վերջին տասնամյակի ընթացքում: Եթե Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքում ԱՄՆ-ն հրաժարվել է ուղղակի ազդեցությունից՝ դրա փոխարեն ձեռք բերելով բացարձակ ազդեցություն Կրաստանում, ապա Լեռնային Ղարաբաղի դեպքում մրցակցությունը Ռուսաստանի հետ շարունակվում է: Հատկանշական է, որ երբ աշխարհաքաղաքական իրավիճակի լարվածությունը մոտենում է բարձրակետին, փորձում է արվում ռազմական ուժի կիրառմամբ լուծել խնդիրը: 2008թ. դա փորձեց անել Կրաստանը, 2016թ. ապրիլին՝ Ադրբեջանը: Դժվար չէ նկատել, որ երկու դեպքում էլ միջազգային հանրությունն արագ արձագանքեց զարգացումներին, սակայն որևէ էական քայլ չարվեց հետագայում կրկնությունը կանխելու նպատակով: Պարտադրված վերջնական իրավական լուծումը՝ անկախության ճանաչումը, որը միակ իրական ճանապարհն է ինքնորոշման հակամարտությունների դեպքում, դառնում է ազդեցիկ պետությունների շահերի բախման գերին: Հակամարտությունների կարգավորման գործընթացում ներգրավված միջազգային կազմակերպությունները ոչ միանշանակ վարքագիծ են դրսևորում, և եթե պետությունների պարագայում նման վարվելակերպը որոշ առումներով հասկանալի է (բայց ոչ ընդունելի՝ որպես իրենց իսկ հաստատած միջազգային իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարում), ապա միջազգային կազմակերպությունների դեպքում նման վարվելակերպը ստեղծում է ամենաթողության մթնոլորտ՝ ավելի ու ավելի բարդացնելով կարգավորման գոր-

<sup>1</sup> Torosyan T., Vardanyan A., *The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, Geopolitics*, 2015, № 20, 3, pp. 559-582.

ծընթացը: Ավելին, հակամարտության կարգավորման բանակցային գործընթացից դուրս են մնում ինքնորոշման հայտ ներկայացրած կողմերը՝ կարգավորման գործընթացը դարձնելով ապօրինի միջազգային իրավունքի տեսակետից, ըստ որի միայն ինքնորոշվող ժողովուրդն իրավունքի ունի որոշելու իր քաղաքական կարգավիճակը՝ բնակչության կամքի ազատ արտահայտմամբ:

Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների համեմատական վերլուծությունը՝ իրավական և քաղաքական բաղադրիչների ուսումնասիրության հիման վրա, ոչ միայն արդյունավետ է, քանի որ դրանք ունեն ուսումնասիրությունը պարզեցնող մի շարք ընդհանրություններ, այլև թույլ է տալիս եզրակացնել, որ ԼՂՀ-ն ունի բացահայտ բացառիկ ու շահեկան դիրք մյուս երկու հակամարտությունների համեմատ, իրավական առումով անթերի ընթացք և քաղաքական բաղադրիչի ճիշտ կազմակերպման դեպքում՝ ճանաչման լավ հեռանկարներ:

### ***Մարգարիտ Պետրոսյան***

#### **ԼԵՈՒԱՅԻՆ ԴԱՐԱՔԱԴԻ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄՅՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԶԱՌՈՐԴ ԴԱՐ ԱՆՑ**

***Բանալի բառեր՝ Հարավային Կովկաս, հակամարտություններ, իրավական և քաղաքական բաղադրիչներ***

Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորումն ու վերջնական հանգուցալուծումը շարունակում է մնալ չափազանց բարդ գործընթաց, չնայած միջազգային հանրության կողմից ուշադրության կենտրոնում լինելու փաստին: Տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է տարանջատել կարգավորման գործընթացներին առնչվող խնդիրների շրջանակն ըստ իրավական և քաղաքական բաղադրիչների, քանզի կարգավորման քաղաքական բաղադրիչը պետք է կառուցված լինի իրավական հստակ ձևակերպման վրա: Ուստի չափազանց կարևոր է համեմատել և վերլուծել Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորման իրավական և քաղաքական բաղադրիչները, դիտարկել կարգավորման գործընթացների խոչընդոտներն ու ձեռքբերումները քառորդ դար անց և հևարավոր հեռանկարները:

*Маргарит Петросян*

**ПРАВОВЫЕ И ПОЛИТИЧЕСКИЕ КОМПОНЕНТЫ  
УРЕГУЛИРОВАНИЯ НАГОРНОГО КАРАБАХСКОГО КОНФЛИКТА  
И ДРУГИХ КОНФЛИКТОВ ЮЖНОГО КАВКАЗА СПУСТЯ  
ЧЕТВЕРТЬ ВЕКА**

**Ключевые слова:** *Южный Кавказ, конфликты, правовые и политические компоненты*

Урегулирование конфликтов на Южном Кавказе продолжает оставаться очень сложным процессом, несмотря на то, что они продолжают оставаться в центре внимания международного сообщества. В целях обеспечения эффективности процессов урегулирования конфликтов необходимо четко дифференцировать проблемы связанные с правовыми и политическими компонентами. Для ожидаемого положительного результата политическая составляющая должна быть построена на четкой и точной правовой формулировке. Поэтому очень важно сравнить и проанализировать правовые и политические составляющие урегулирования конфликтов на Южном Кавказе за четверть века и возможные перспективы.

*Margarit Petrosyan*

**NAGORNO-KARABAKH AND THE SOUTH CAUCASUS OTHER  
CONFLICTS RESOLUTION QUARTER OF A CENTURY LATER:  
LEGAL AND POLITICAL COMPONENTS**

**Key words:** *South Caucasus, conflicts, legal and political components*

The resolution of the South Caucasus conflicts still represents an extremely complicated process, despite being in the center of the international community's attention. In order to ensure the efficiency of conflict resolution processes it is first necessary to clearly differentiate the process-related problems according to the legal and political components. Moreover, the political component should be built on clear legal formulations. Therefore, it is urgent to compare and analyze the legal and political components of the South Caucasus conflicts resolution, to observe the factors hindering these processes quarter of a century later, as well as to illustrate the achievements and the resolution perspectives.